www.acrpc.am

Իրավական աշխարհ

ՀԿա Հասարակություն
առանց իրավունքի

Ubi societas ibi jus

երկուշաբթի
թիվ 18 (38)
2008 թ. սեպտեմբերի 15

ՊԱՇՏՈՆ ԵՎ ԼԵԶՈՒ

Ազգային ժողովի նախագահի հրաժարականի, դրան հաջորդած խոսնակի նոր թեկնածուի խնդիրը քաղաքական ալեբախությունների առիթ տվեց, և հայրենի քաղաքական լճակը վերստին «ապշած» է՝ իբր: Բայց մենք մի կողմ ենք թողնում բոլոր հարկավոր և անհարկի դատողություններն այս խնդրի շուրջ, Տիգրան Թորոսյան, Հովիկ Աբրահամյան քաղաքական անձերին նույնպես մի կողմ ենք թողնում՝ փորձելով խնդրին մոտենալ մեկ այլ՝ մանկավարժական տեսանկյունից: Թերևս զարմանալի է, բայց՝ այո՛, մանկավարժական: Հատկապես որ մեր ազգային խորհրդարանում մանկավարժագիտության զարգացմանը «գործնական» ուշադրություն է դարձվում, և մեր ընտրյալների շարքում օրըստօրե մեծանում է այդ գիտությամբ հրապուրվածների թիվը, հրապուրանքներն էլ արագ դառնում են գիտական տիտղոսներով պսակված ատենախոսություններ (միայն վերջին շրջանում՝ Հ. Կարապետյան, Էդ. Շարմազանով, Հ. Բիշարյան): Սակայն, չնայած այս ամենին, խիստ կասկածելի է, թե մեր մանկավարժագետ-մանկավարժամետ խորհրդարանը դույզն-ինչ խորհրդածել է իր նախագահ պաշտոնեից ակնկալվող և այլևս անկասելի փոփոխության մանկավարժական հետևանքների մասին:

Իսկ քանի որ այդպիսի հետևանքներ, մեր կարծիքով, լինելու են, ուստի վերադառնանք քաղաքական լճակ և փորձենք պարզել, թե Աժ նախագահի պաշտոնում Հ. Աբրահամյանի «նշանակումը» (ինչպես պաշտոնապես ներկայացվել է) արդյո՞ք սերնդակրթիչ, առավել ևս՝ մանկավարժական դրական նշանակություն կունենա: Չէ՞ որ որևէ պաշտոնում որևէ մեկի նշանակումը միայն չի ենթադրում, թե այդ մարդն արժանի է տվյալ պաշտոնին. այդպիսի նշանակումով, եթե մարդը հանրության կողմից դրականորեն ընդունվող մեկն է, բարձրանում է նաև տվյալ պաշտոնի նշանակալիությունը, և վերջինս վերստին է արժևորվում: Հիմա փորձենք լոկ մեկ դիտարկումով տեսնել, թե որքանո՞վ է Հ. Աբրահամյանի նշանակմամբ արժևոր դառնում Աժ նախագահի բարձր պաշտոնը և արդյո՞ք դառնում է:

Մինչ այդ արձանագրենք, որ իր բավական երկար պաշտոնեական գործունեության ընթացքում Հ. Աբրահամյանը եղել է բավական փականմատույց պաշտոնյա՝ հաջողելով այնքան հազվադեպ ու հպանցիկ երևալ հեռուստաէկրաններին, իսկ որպես զրուցակից՝ այնքան սակավ հայտնվել մամուլի էջերում, որ պիտի հեշտորեն ենթադրվեր, թե նա խուսափում է զանգվածային լրատվության միջոցներից, և այդ խուսափանքը պատճառ ունի:

Եվ կարծում ենք՝ պատճառ կա: Այն խիստ հազվագյուտ դեպքերում, երբ Հ. Աբրահամյանը ստիպված է եղել խոսել, ունկնդիրը զարմացած է մնացել նրա բանավոր խոսքի ճապաղությունից, անկատարությունից: Դա գրեթե միշտ եղել է անկառուցիկ, անարտահայտիչ, բառապաշարի աղքատիկության առումով աչքի զարնող խոսք: Ավելին՝ սխալաշատ խոսք: Իսկ Ազգային ժողովի նախագահի աթոռն ու ամբիոնը ուղղակի պարտավորեցնում են՝ լինել գրագետ, տիրապետել բանավոր խոսքին: Հ. Աբրահամյանն անկասկած իր թիկունքին շարունակաբար և, իր լեզվական գրագիտության պարագայում՝ նաև տհաճորեն, զգալու է պաշտոնակից նախորդների գրագետ շունչը: Հիշենք, որ նոր պաշտոնում Հ. Աբրահամյանը ստիպված է լինելու գոնե պահպանել բանավոր խոսքի այն ավանդույթները, որ նորանկախ Հայաստանում սկիզբ են առել Լ. Տեր-Պետրոսյանից, շարունակվել Խ. Հարությունյանով, Ա. Խաչատրյանով, Վ. Հովհաննիսյանով: Նաև՝ Տ. Թորոսյանով:

Մինչդեռ վերը նշված պատճառներով մենք իսկապես տագնապ ունենք՝ արդյո՞ք Աժ նախագահի այս «նշանակմամբ» նոր սերնդին չենք դրդում մտածելու, թե կարելի է երկրի երկրորդ քաղաքական պաշտոնն ստանալ՝ չունենալով լեզվական անհրաժեշտ գրագիտություն, բանավոր սովորական (էլ չենք ասում՝ գեղեցիկ) խոսք կառուցելու կարողություն ու մշակույթ:

Եվ արդյո՞ք սրանով չենք քամահրում հասարակական կարծիքը, նաև պաշտոն ու լեզու:

ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ
բանասեր

ՁԱՅՆԱՄԵԾԱՑ


ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության ու էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի... բանալին, հոգեկան կարողությունների ամենաձոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը:

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում ..... էջ 2
Ձևավորել կրթական ընդհանուր միջավայր բարձրագույն կրթական տարածքում ..... էջ 3
«Ամենաթանկ ռեսուրսը մարդն է» ..... էջ 3
Արձագանք ..... էջ 3
Վարքականոնի նախագիծ՝ ՏԻՄ թեկնածուների համար ..... էջ 4
Ահազանգ Ստեփանավանից ..... էջ 4
Բոյկոտ. 46 ՈԿԿ-ների հայտարարությունը ..... էջ 5
Բժշկական օգնության 12 սկզբունքները ..... էջ 5
Հրաչիկ Մարուքյան. «Լոռին՝ հնագույն քաղաքակրթության բնօրրան» ..... էջ 6
Վանաձորի Ս. Գր. Նարեկացի եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Վահան քահանա Ազարյանի քարոզից ..... էջ 7
Տեղեկույթ, ազդ, հայտարարություններ ..... էջ 8

60
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՌԱՏԵՍԱԿ

ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՏԻ 1-2-Ի ԴԵՊՔԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՅՈՒՅԱԴՐՎԱԾ ՇԱՐԺԱՆԿԱՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

2008 թվականի սեպտեմբերի 10-ին մարտի 1-2-ի դեպքերն ուսումնասիրող հասարակական հանձնախումբը ներկայացրեց իր կողմից պատրաստված նախնական զեկույցը և այդ դեպքերին առնչվող մոտ կեսժամանոց վավերագրական շարժանկար:

Նշված շարժանկարը ներկայացվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանին: Շարժանկարի բովանդակությունը և դրանում տեղ գտած կադրերն ու տեսարանները լուրջ մտահոգություն են առաջացրել: Պաշտպանը կոչ է արել Ազգային ժողովի՝ մարտի 1-2-ի դեպքերն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովին ուսումնասիրել շարժանկարում ներկայացված դեպքերն ու իրադարձությունները, դեպքերի լրիվ, համակողմանի և օբյեկտիվ քննություն իրականացնել, անհրաժեշտության դեպքում միջոցներ ձեռնարկել շարժանկարը համապատասխան փորձաքննության ենթարկելու ուղղությամբ՝ դրանում տեղ գտած կադրերի ու տեսարանների իրական և շինծու չլինելու հարցը պարզելու նպատակով:

Անհետաձգելի ու չափազանց կարևոր է տեսանյութում ներկայացված ուժային կառույցների ներկայացուցիչների առանձնակի դաժան և ոչ իրավաչափ գործողությունների առնչությամբ անցկացնել համապատասխան քննություն՝ ապօրինի գործողություններ կատարելու հրամաններ տված և այդպիսիք անմիջականորեն իրականացրած անձանց հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու համար:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՕՐԱՑՈՒՅՑ

Սեպտեմբերի 16 - Օզոնային շերտի պահպանության միջազգային օր

Սեպտեմբերի 21 - Խաղաղության միջազգային օր

Նեվի Փիլեյ. «Ցեղասպանությունը խտրականության դրսևորման ծայրահեղ ձև է»

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների նորընտիր գերագույն հանձնակատար, Նեվի Փիլեյն անդամ երկրների առաջնորդներին հղած իր ուղերձում նշել է, որ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել խտրականության ու անհավասարության վերացման ուղղությամբ: Առավել մեծ ջանքեր են պահանջվում ցեղասպանությունը որպես *«խտրականության ծայրահեղ ձև»* կանխելու համար:

Միջազգային դատարաններում 13 տարվա փորձ ունեցող հանձնակատարը հորդորել է պայքարել քաղաքական լարվածությունների դեմ, որոնք առաջացնում են ցեղասպանության հանգեցնող էթնիկական, ռասայական և կրոնական հակամարտություններ: Ինքը՝ Փիլեյը, որը ժամանակին Հարավային Աֆրիկայում ռասայական և գենդերային խտրականության զոհ է դարձել, նշել է, որ զարգացումը, անվտանգությունը, խաղաղությունն ու արդարությունը վտանգվում են, երբ անհավասարությունը և խտրականությունը խաթարում են բնակչության ներդաշնակ գոյությունը:

774 մլն մարդ տառաճանաչ չէ

Սեպտեմբերի 8-ը Գրագիտության միջազգային օրն է: Այս տարի ընտրված է առողջության թեման, որն էականորեն պայմանավորված է մարդու կրթվածության աստիճանով:

Աշխարհում 774 մլն մեծահասակ մարդ գրագետ չէ, իսկ 75 մլն դպրոցահասակ երեխա զրկված է կրթություն ստանալու հնարավորությունից:

Այդ առթիվ իր ուղերձում ՅՈՒՆԵՍԿՈ-ի գլխավոր տնօրեն Կոիտիրո Մացուրան ուշադրություն է հրավիրել այն փաստի վրա, որ 15 և ավելի տարիք ունեցող յուրաքանչյուր հինգերորդ չափահասն անկարող է կարդալ նույնիսկ փողոցի անվանում, մանկական գիրք, թերթ կամ դեղատոմսի հրահանգը: Նա նշել է, որ անգրագետ մարդիկ հիվանդությունների համար առավել խոցելի են:

ՅՈՒՆԵՍԿՈ-ի գլխավոր տնօրենի համոզմամբ՝ գրագիտությունն ուղիներ է բացում դեպի իրավունքների և հնարավորությունների մատչելիություն, բարձրացնում է իրազեկվածության մակարդակը՝ ներգործելով մարդկանց, ընտանիքների և հանրությունների վարքագծի վրա:

2007 թ. մահացել է 9,2 մլն մանկահասակ երեխա

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի՝ աշխարհի տարբեր երկրներում մանկական մահացության վիճակագրական տվյալները ներկայացնող նոր զեկույցում նշված է, որ վերջին 20 տարում մանկական մահացության ցուցանիշները նվազել են 27%-ով: 2007 թ. աշխարհում մահացել է 9,2 մլն մանկահասակ երեխա. այս ցուցանիշը 60%-ով ցածր է 1960 թ. ցուցանիշից: Իսկ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում մանկական մահացության մակարդակը 1990 թ. համեմատ հաջողվել է կրճատել 50%-ով:

Սա վկայում է այն մասին, որ այդ երկրները Հազարամյակի զարգացման այդ նպատակի նվաճման ճիշտ ճանապարհին են: Սակայն նշված ձեռքբերումը դեռևս չի վերաբերում Սահարայի հյուսիսին հարակից աֆրիկյան շրջանին, քանզի այստեղ վերջին 20 տարիներին մանկական մահացության ցուցանիշները հաջողվել է կրճատել ընդամենը 27%-ով:

ԱՊՀ երկրներում տարեկան մահանում է 1000-ից 26 երեխա, այն դեպքում, երբ 1990 թ. այդ թիվը կազմել է 55:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի գործադիր տնօրեն Վենեմանի կարծիքով՝ մանկական մահացության պատճառն առաջին հերթին աղքատությունն է, որը հանգեցնում է մայրերի թույլ առողջությանն ու թերսնմանը:

Սննդային ճգնաժամն սպառնում է սնվելու մարդկային իրավունքին

«Աճող գների հետևանքով ծագած համընդհանուր սննդային ճգնաժամը սպառնում է սնվելու մարդկային իրավունքին. այս խնդրի լուծման ցանկացած եղանակ պետք է դիտարկվի մարդու իրավունքների տեսանկյունից»-, ասել է ՄԱԿ-ի անկախ փորձագետը:

Ժնևում Մարդու իրավունքների խորհրդին ներկայացնելով իր վերջին զեկույցը՝ ՄԱԿ-ի սնվելու իրավունքի հարցերով հատուկ զեկուցողը հայտնել է, որ միջազգային աջակցությունն ու համագործակցությունը կարող են արդյունավետ կերպով կանխել սնվելու իրավունքի ոտնահարումները:

Թեև գների կտրուկ աճով պայմանավորված շրջադարձն աշխարհում մեծ վնաս հասցրեց մարդկանց, սակայն աղքատները շարունակում են քաղցել ոչ թե սննդի սակավության, այլ դրամական միջոցների անբավարարության պատճառով:

Համաշխարհային պարենային ծրագիրն առաջիկայում ավելի քան 200 միլիոն դոլար կտրամադրի այն 16 տարածաշրջաններին, որոնց բնակիչներն առավել ծանր պայմաններում են:

Ատոմային էներգիայի օգտագործման ծավալը կարող է կրկնապատկվել մինչև 2030 թ.

Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը ներկայացրել է մինչև 2030 թ. միջուկային տնտեսության համընդհանուր զարգացման կանխատեսվող տվյալները: Գործակալության փորձագետները չեն բացառում, որ այդ ընթացքում ատոմային էներգիայի կիրառման ծավալն աշխարհում կարող է կրկնապատկվել:

Այսօր ատոմակայաններն ապահովում են արտադրվող ողջ էլեկտրաէներգիայի 14%-ը:

Մինչև 2007-ի տարեվերջը ամբողջ աշխարհում շահագործվել է 439 միջուկային էներգետիկ ռեակտոր, և կառուցվել է ևս 34-ը: Անցյալ տարի շահագործման են հանձնվել երեք նոր ռեակտորներ Չինաստանում, Հնդկաստանում և Ռումինիայում:

Գործակալության փորձագետները գտնում են, որ գազի, նավթի և ածխի գների աճով պայմանավորված՝ մոտակա երկու տասնամյակների ընթացքում միջուկային էլեկտրակայանները կարող են դառնալ էլեկտրաէներգիայի հիմնական աղբյուր:

Սեպտեմբերի 16-ը օզոնային շերտի պահպանման միջազգային օրն է

Օզոնային շերտի պահպանման միջազգային օրվա առթիվ իր ուղերձում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունը հայտարարել է, որ տասնամյակների ընթացքում օզոնային շերտը ենթարկվել է «քիմիական զանգվածային հարձակումների», ուստի նրա վերականգնումը տևական ժամանակ և ջանքեր է պահանջում:

Այդ մասին նշված է նաև Մոնրեալյան դաշնագրում:

Մոնրեալյան դաշնագիրն ստորագրվել է 1987 թ. սեպտեմբերի 16-ին: Դրան նախորդել է Վիեննայի համաձայնագիրը: Այս երկու փաստաթղթերի հիմնական նպատակն է կանխել օզոնային շերտի հետագա քայքայումը: Ինչպես հայտնի է, օզոնային շերտը Երկիրը պաշտպանում է ուլտրամանուշակագույն ճառագայթահարումից, որը մաշկային քաղցկեղի առաջացման հիմնական պատճառն է: Այդ հիվանդությունից տարեկան 66 հազար մարդ է մահանում:

Մոնրեալյան դաշնագրի շրջանակներում հաջողվել է ավելի քան 95%-ով կրճատել օզոնային շերտը քայքայող 100 տեսակի քիմիական նյութերի արտադրությունն ու կիրառությունը:

Պան Գի Մունը նշել է, որ հաջորդ տարի Կոպենհագենում պետք է ստորագրվի նոր համաձայնագիր, որը բոլոր երկրներին հնարավորություն կտա կայունացնել ջերմային գազերի արտանետումների ծավալները: Ըստ նրա՝ համաձայնագիրը կարող է ոչ միայն առաջընթաց գրանցել ժամանակի ամենասուր խնդիրներից մեկի լուծման գործընթացում, այլև նպաստել քաղաքներում օդի աղտոտման, կենսաբազմազանության կորստի և այլ վտանգավոր երևույթների կանխման գործին:

Գլխավոր քարտուղարը կոչ է արել բոլոր երկրներին «կանաչ տնտեսությունն» արդեն այսօր դարձնել իրականություն:

Արգենտինան վերացնում է մահապատիժը

2008 թ. սեպտեմբերի 2-ին Արգենտինան վավերացրել է *ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի* վերաբերյալ երկրորդ կամընտիր արձանագրությունը, որի նպատակը երկրում մահապատժի վերացումն է: Արձանագրության վավերացմանը հաջորդել է կառավարության կողմից Մարդու իրավունքների ամերիկյան դաշնագրի վավերացումը՝ 2008 թ. սեպտեմբերի 5-ից Արգենտինայում վերացնելով մահապատիժների կիրառումը:

2008 թ. սեպտեմբերի 10-ի դրությամբ 137 երկրներում վերացվել է մահապատիժը, իսկ Արգենտինային հարակից տարածաշրջանում միայն Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Գվատեմալայում և Կարիբյան երկրներում է այն կիրառվում որպես պատժամիջոց: Արգենտինայի կառավարությունը կոչ է անում մյուս երկրներին ևս վերացնել մահապատժի կիրառումը:

ՁԵՎԱՎՈՐԵԼ ԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՋԱՎԱՅՐ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

ՀՀ ԿԳ նախարարությունը Եվրոպայի խորհրդի աջակցությամբ Ծաղկաձորում սեպտեմբերի 8-9-ը կազմակերպել էր Եվրախորհրդի բարձրագույն կրթության որակավորումների շրջանակի վերաբերյալ միջազգային խորհրդաժողով, որին մասնակցում էին պատվիրակներ Դանիայից, Իտալիայից,

Անգլիայից, Մոլդովայից, Էստոնիայից, Հունգարիայից, Ղազախստանից, Լատվիայից և Ուկրաինայից, ինչպես նաև Եվրախորհրդի և հայաստանյան կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Եվրոպայի բարձրագույն կրթական տարածքում (ԵԲԿՏ) որակավորումների ընդհանուր շրջանակի ձևավորումը և դրանց փոխանակումը Բոլոնիայի գործընթացի կարևորագույն բաղադրիչներից են: Ուստի, ԵԲԿՏ կրթության նախարարները 2005 թ. Բերգենի հանդիպման ընթացքում պարտավորվել են մինչև 2010 թվականը մշակել որակավորումների ազգային շրջանակների փոխանակման գործընթացը:

Խորհրդաժողովի բացմանը, ողջունելով հյուրերին, ՀՀ ԿԳ նախարար Ս. Սեյրանյանը նշեց, որ Հայաստանը պատրաստ է իրագործելու Բոլոնիայի գործընթացի լիիրավ անդամ դառնալու համար անհրաժեշտ բոլոր բարեփոխումները: *«Գիտակցելով, որ «Գիտելիքի Եվրոպան», բնորոշվելով որպես հասարակության մարդկային, սոցիալական և տնտեսական զարգացման վրա ազդող գործոն, ինչպես նաև առաջնորդվելով Բոլոնիայի գործընթացի սկզբունքներով, Հայաստանի կրթական համակարգի բարեփոխումներում կարևոր տեղ են հատկացվում բուհերի ինքնավարությանը, ակադեմիական ազատությանը, կրթության որակի հավաստման համակարգին, որակավորումների շրջանակի մշակմանը, ուսանողների մասնակցությանը բուհական կառավարմանը և կրեդիտային փոխանցման համակարգի ստեղծմամբ շարժունության աջակցմանը, միջազգային համագործակցությանը»,-* ասել է նախարարը: Ըստ նրա՝ Հայաստանի կրթական բարեփոխումներում որակավորումների ազգային շրջանակի մշակումը և դրա ներդաշնակումը եվրոպական համընդգրկուն շրջանակի հետ կենտրոնական դեր են խաղում: Այն նպատակ ունի բարձրացնելու ազգային կրթական համակարգի թափանցիկությունը՝ օգտագործելով համադրելի կրթական աստիճաններ՝ նպաստելու ուսանողների շարժունությանը, որը հիմնված է կրթական արդյունքների ճանաչման վրա: Որակավորումների ազգային շրջանակի իրականացումը կնպաստի նաև Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի գրավչության աստիճանի բարձրացմանը և օտարերկրյա ուսանողների և դասախոսական ու հետազոտական կազմի շարժունության ավելացմանը:

Աղբյուրը՝ edu.am

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱԹԱՆԿ ՌԵՍՈՒՐՍԸ ՄԱՐԴՆ Է

ՀՀ ԿԳ նախարար Ս. Սեյրանյանը օրեր առաջ հանդիպում ունեցավ ուսանողների փոխանակման միջհամալսարանական համաձայնագրի շրջանակներում Հայաստանում գտնվող Անտվերպենի համալսարանի կիրառական տնտեսագիտության ֆակուլտետի մի խումբ ուսանողների հետ: ԵՊՀ-ում հյուրընկալված բելգիացի ուսանողները երկշաբաթյա այցի ընթացքում ԵՊՀ դասախոս Թաթուլ Մանասերյանի օգնությամբ կծանոթանան մեր երկրի՝ որպես անցման շրջանում գտնվող համակարգի տնտեսության առանձնահատկություններին:

Նախարարն ուսանողներին ներկայացրեց Հայաստանի բուհական համակարգում իրականացվող բարեփոխումները, դրանց նպատակը և պատասխանեց նրանց հետաքրքրող հարցերին: Քննարկվեցին հարցեր ինչպես Հայաստանի հանրակրթության համակարգի, այնպես էլ բուհական ընդունելության քննությունների, մասնագիտական կրթության մատչելիության, դասախոսական համակազմի որակավորման և բուհերի լավագույն շրջանավարտների արտահոսքը երկրից կանխելու նպատակով պետության կողմից իրականացվող քայլերի մասին: Ուշագրավ էր ուսանողներից մեկի այն հարցը, թե ի՞նչ ռեսուրսների վրա է հիմնվում *«Հայաստանի տնտեսությունը, քանի որ այն չունի ո՛չ նավթ, ո՛չ գազ, աչքի չի ընկնում օգտակար հանածոների հարուստ պաշարով»:*

«Հայաստանի ամենամեծ «օգտակար հանածոն» ու ամենաթանկ ռեսուրսը մարդն է, ու պատահական չէ, որ մեր պետությունն այսօր իր քայլերն ուղղում է մարդկային կապիտալի որակի բարձրացմանն ու հարստացմանը: Այդ նպատակին ենք ծառայեցնելու այսօր կրթական համակարգում սկսված բարեփոխումները և դրա համար էլ չափազանց կարևորում ենք գործընթացի դրական արդյունքը»,- պատասխանեց նախարարը:

Աղբյուրը՝ edu.am

ԱՐՁԱԳԱՆՔ

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

«Իրավական մշակույթ»-ի 2008 թ. հուլիսի 31-ի թիվ 14 համարում տպագրվել էր Վանաձորի թիվ 21 միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, բանասիրական գիտությունների թեկնածու Մարիամ Շոլինյանի վերլուծական հոդվածը՝ «Երբ «առաջնորդներն» զբաղված են…» վերտառությամբ, որում հեղինակը քննության նյութ է դարձրել միասնական և ավարտական քննությունների ընթացակարգը:

Հոդվածում արտահայտված որոշ կարծիքների ու համակարգին տրված որակումների առնչությամբ իրենց անհամաձայնությունն են հայտնել նույն դպրոցի մի խումբ ուսուցիչներ՝ թերթի խմբագրություն բերելով մի նամակ և խնդրելով, որ այն տպագրվի որպես արձագանք:

«*Երբ «առաջնորդներն» զբաղված են…*» հոդվածում Վանաձորի N 21 միջն. դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Մ. Շոլինյանը ցանկանում է արտահայտել նոր քննակարգի մասին իր «սրտացավությունը», բայց մի կողմ թողնելով ավարտական և միասնական քննությունների կազմակերպման մեջ տեղ գտած թերությունների օբյեկտիվ մեկնաբանությունը՝ առանց փաստերի և անձերի աղավաղում է այն ծանր գործընթացը, որի ականատեսն են ոչ միայն աշակերտները, ծնողները, կազմակերպիչները, այլև **մարզպետարանից կցված պատասխանատու անձինք** (N 21 միջն. դպրոցի պատասխանատուն է եղել մարզպետարանի աշխատակից Վ. Օհանյանը):

Նպատակ չունենալով բացատրելու քննության կարգը՝ ուղղակի նշում ենք, որ հոդվածում շատ հարցեր ներկայացված են **առանց այդ կարգի ստույգ իմացության** (տարբեր լեզուների ուսուցիչներ հարակից չեն, աշակերտը թերթիկի վրա իր ձեռագրով իրավունք ունի գրելու միայն «Ծանոթ եմ քննության կարգին» նախադասությունը և այլն):

Խեղաթյուրված «փաստերը» չենք մասնավորեցնում որևէ դպրոցի վրա, քանի որ այսօրվա դպրոցն անընդհատ է վերահսկվում, և գիտական կոչումով մանկավարժին հարիր չէ ցեխ շպրտել «որոշ» տնօրենների և մանկավարժական կոլեկտիվների երեսին, մանավանդ որ հեղինակը՝ Մ. Շոլինյանը ևս նպատակ ունի լրացնելու այդ տնօրենների շարքը, ուստի նպատակին հասնելու միջոցների մեջ խտրություն չի դնում:

Որպես ինքնավարման գործընթացի և կազմակերպիչ, և իրականացնող՝ մենք գիտենք քննական նոր կարգի և առավելությունները, և թերությունները: Կարծում ենք՝ անհրաժեշտ է դրանց հրապարակային քննարկումը, քանի որ այս ուստարվանից միասնական կարգին են ենթարկվելու բնագիտական և հասարակագիտական առարկաների քննությունները: Նպատակը մեկն է՝ բացառել և գործընթացի թերությունները, և հարցաթերթիկում տեղ գտած բովանդակային անհամապատասխանությունը ծրագրային նյութերին:

Մենք պատրաստ ենք **առողջ և գրագետ քննարկման,** ուստի նպատակ չունենք մեր անհամաձայնությունը հոդվածագրին հայտնելու նույնպիսի գրելաոճով, ինչպես շարադրված է «Երբ «առաջնորդներն» զբաղված են…» հոդվածը»:

Նամակն ավարտվում է հետևյալ հետգրությամբ. *«Թիվ 21 միջնակարգ դպրոցի կոլեկտիվը զարմացած է, որ թերթը նյութը տպագրել է առանց կոնկրետ փաստերն ուսումնասիրելու և հենվելով շարքային ուսուցչի սուբյեկտիվ կարծիքի վրա…»:*

Վանաձորի թիվ 21 միջն. դպրոցի
ուսուցիչներ
16 ստորագրություններ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ.

Թերթն ազատ ամբիոն է յուրաքանչյուր անհատի նաև սուբյեկտիվ կարծիքների, այդ թվում՝ սույն արձագանքի հրապարակման համար: Հոդվածում նշված «կոնկրետ փաստերն» ուսումնասիրելու անհրաժեշտություն մենք չենք տեսել (դա պատկան մարմինների գործն է), սակայն խմբագրել և կրճատել ենք և՛ հիշյալ հոդվածում, և՛ սույն արձագանքում եղած ոչ պատշաճ ձևակերպումները: Խմբագրությունը չի կասկածում, որ դպրոցի մանկավարժական կոլեկտիվը սիրով, համերաշխությամբ կհաղթահարի, կկարգավորի եղած տարաձայնությունները և կշարունակի իր ազնիվ գործունեությունը մատաղ սերնդի կրթության, դաստիարակության գործում:

ԻՆՉՈՒ Է ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԵԼ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻՆ

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

Հայտնում եմ, որ սույն թվականի սեպտեմբերի 10-ին իմ աշխատակազմի քրեադատավարական և զինծառայողների իրավունքների վերականգնման խմբի աշխատակիցները բանավոր դիմում-բողոքների հիման վրա, իմ հանձնարարությամբ Երևան քաղաքի Հյուսիսային պողոտա կատարած այցելության ժամանակ արձանագրել են, որ Թումանյան փողոցից մինչև Պուշկին փողոց ընկած հատված մուտք գործելը արգելված էր ՀՀ Ոստիկանության աշխատակիցների կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի դրույթներով՝ խնդրում եմ տալ Ձեր պարզաբանումները վերը նշվածի իրավական հիմնավորվածության վերաբերյալ:

Հարգանքով՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՐՔԱԿԱՆՈՆԻ ՆԱԽԱԳԻԾ՝ ՏԻՄ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Իրավական մշակույթ»-ը ողջունում է առաջին անգամ այսպիսի վարքականոնի մշակումն ու հրապարակումը և տպագրում է այն ամբողջությամբ՝ այլ մարզերում, համայնքներում հնարավոր կիրառման համար:

Գյումրու հանրային խորհրդի 7-րդ նիստի որոշմամբ ԳՀԽ հատուկ աշխատանքային խումբը մշակել և հանրությանն է ներկայացնում *Գյումրու Տեղական ինքնակառավարման մարմինների թեկնածուների Վարքականոնի նախագիծ:*

Նախագիծը մշակելիս հաշվի են առնվել բոլոր այն հնարավոր չարաշահումները, որ կարող են տեղի ունենալ առաջիկա ընտրապայքարում, այն ամենը, ինչ տեղի է ունեցել անցյալում՝ տեղական և համապետական ընտրությունների ժամանակ. պաշտոնական դիրքի չարաշահում, հանրային միջոցների անօրինական օգտագործում, հեքիաթային խոստումներ ընտրողներին, անպատասխանատու վարք, չստուգված տեղեկությունների օգտագործում, կասկածելի դիպլոմների ու կոչումների գոյություն ու շահարկում և այլն:

Հաստատված Վարքականոնը տրամադրվելու է Գյումրու ավագանու և քաղաքապետի բոլոր թեկնածուներին՝ ծանոթացման: Ապա՝ մինչև քարոզաշրշավի մեկնարկը՝ հոկտեմբերի 7-ը, նրանց առաջարկվելու է ներկայացնել իրենց վերաբերմունքը այս կանոնակարգի նորմերի վերաբերյալ, պարզել՝ արդյո՞ք իրենց համար ընդունելի են այստեղ բերված նորմերը, և արդյո՞ք իրենք կամավոր ստանձնում են այդ նորմերի կատարումը, թե՞ ոչ: Անկախ այդ հարցումների արդյունքներից՝ Գյումրու հանրային խորհուրդը ընտրապայքարի դիտարկման իր առաջին միջանկյալ եզրակացության մեջ հոկտեմբերի 13-ին հանրության համար հանգամանորեն ներկայացնելու է գրանցված և ընտրապայքարի մեջ մտած թեկնածուների վերաբերմունքը Վարքականոնի պահանջների նկատմամբ: Ընտրապայքարի ընթացքում Գյումրու հանրային խորհուրդը ևս երկու անգամ (հոկտեմբերի 20-ին և հոկտեմբերի 23-ին) իր եզրակացություններով ընտրողներին է ներկայացնելու ընտրապայքարի ընթացքում Վարքականոնի դիտարկված հնարավոր խախտումները և դրանց վերաբերյալ թեկնածուների հնարավոր մեկնաբանությունները: Գյումրու հանրային խորհրդի ունեցած տեղեկություններով նման փաստաթուղթ Հայաստանում հանրության դատին է ներկայացվում առաջին անգամ:

Աշխատանքային խումբն ակնկալում է ստանալ բոլոր շահագրգիռ անձանց (հնարավոր թեկնածուների, լրագրողների, ավագանու գործող անդամների, հասարակական կազմակերպությունների, գործարարների, ակտիվ քաղաքացիների) դիտողություններն ու առաջարկները:

Արձագանքների համար կարող եք գրել.
levon@asparez.am, star@shirak.am,
կամ զանգահարել՝
հեռ. 031250622, 031236918, 091821363:

ԳՅՈՒՄՐՈՒ ՏԻՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՎԱՐՔԱԿԱՆՈՆԸ

Ես՝ Գյումրու ավագանու անդամության (քաղաքապետի) թեկնածուս, հաշվի առնելով Տեղական ինքնակառավարման մարմիններում իմ հավակնած պաշտոնի հանրային կարևորությունը, ինչպես նաև ժողովրդավարական ընտրությունների միջոցով ընտրվելու հրամայականը, կամավոր ընդունում և ճանաչում եմ այս վարքականոնի սկզբունքները և դրանցով առաջնորդվելու եմ ամբողջ ընտրապայքարի ընթացքում.

ՏԻՄ թեկնածուի Վարքականոնի սկզբունքներ.

1. ՏԻՄ քարոզարշավի ընթացքում ընտրողների դիրքորոշման վրա չազդել ընտրակաշառքով, այդ թվում՝ պաշտոնական առաջխաղացման և աշխատատեղերի անձնականացված խոստումներով, նյութական օժանդակությամբ, սննդամթերքի, դեղորայքի մատակարարմամբ, զանազան պարտքերի մարման խոստումներով և մարումներով, տնտեսական գործունեությանն առնչվող արտոնությունների և կենցաղային (բնակարան, ԲԳՎ, հողամաս, հերթագուցակային առաջխաղացում) բնույթի անձնականացված խոստումներով և համանման գործողություններով:

2. Քարոզչության շրջանակներում՝ ելույթներում, մրցակիցների հասցեին քննադատություններում պահպանել քաղաքավարության և պարկեշտության նվազագույն նորմերը, չզրպարտել, հրաժարվել չստուգված տեղեկությունների հրապարակումից:

3. Բոլոր հնարավոր պարագաներում և հանգամանքներում մրցակիցներին վերաբերվել ծայրահեղ հանդուրժողականությամբ և հարգանքով:

4. Հանրությանը հաշվետու լինել բոլոր հնարավոր միջոցներով, այդ թվում պարբերական մամլո ասուլիսներով, ընտրողների հետ անհատական և խմբային հանդիպումներով, կանոնակարգված ընդունելություններով, ԶԼ միջոցներով, իր՝ որպես ավագանու անդամի, գործունեության մասին նախնական և հաջորդիվ իրազեկումներով:

5. Թեկնածուի կոչումների և վկայագրերի մասին հիշատակելիս, նշել, թե ինչ հաստատությունների կողմից է շնորհվել, ինչ ճանաչում ունեն այդ կազմակերպությունները և կոչումները տվյալ ոլորտներում, և ինչի համար են շնորհվել:

6. Հանրությանը նախկինում մատուցած ծառայությունները հիշատակելիս, կոնկրետ նշել, թե որտե՞ղ, ե՞րբ, ի՞նչ միջոցներով են տրվել միջոցները, և որտեղից են հայթայթվել այդ միջոցները: Այս իրազեկումների մեջ հստակ տարանջատել ի պաշտոնե կատարած աշխատանքները ոչ ի պաշտոնե կատարածներից:

7. Ընտրապայքարում ծրագրային խոստումները սահմանել և իրազեկել ողջամիտ իրատեսության սահմաններում, չստել:

8. Թեկնածուի ծրագրերը ներկայացնելիս հնարավոր ճշգրտությամբ նշել ծրագրերի ոլորտները, թիրախները, փուլերը, իրականացման ժամկետները և ռեսուրսները. հանրային, մարդկային, նյութական, ֆինանսական, մասնագիտական, քաղաքական և իրավական:

9. Քարոզչական գործողություններում և աշխատանքներում չներգրավել անչափահասներին. քարոզչական նյութերի տարածում, նախընտրական հանդիպումների մասնակցություն, քարոզում և համանման գործողություններ:

10. Քարոզչության նպատակով, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, չօգտագործել հանրային միջոցներ, մասնավորաբար.

- Չօգտագործել պետական, համայնքային սեփականությունը և թաղային կամ համատիրական սեփականությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.
- Չկազմալուծել համայնքային և պետական մարմինների, կրթական, առողջապահական հիմնարկների, արտակարգ իրավիճակների, սոցիալական, իրավապահ ծառայությունների և ……. աշխատանքը.
- Չիրականացնել քարոզչություն համայնքային և պետական հիմնարկներում աշխատանքային ժամերին.
- Չօգտագործել հասարակական կազմակերպությունների, ոչնախընտրական հիմնադրամների և դրանց տարատեսակ միավորումների ֆինանսական, դրամաշնորհային և ծառայողական … միջոցները:

11. Չօգտագործել բնական մենաշնորհները սպասարկող ձեռնարկությունների (գազամատակարարման, ջրմուղի, հեռախոսակապի, էներգամատակարարման) միջոցները, չկազմալուծել դրանց աշխատանքը և աշխատակիցներին աշխատաժամերին չներգրավել քարոզչության մեջ:

12. Գովազդային նյութերում զուսպ լինել համայնքային և պետական խորհրդանիշների օգտագործման դեպքերում, չչարաշահել դրանք և «չսեփականացնել». գովազդներում շեշտը դնել ոչ թե պետական և համայնքային խորհրդանիշների վրա, այլ սեփական ծրագրերի և գաղափարների:

13. Բացառել քարոզչական տեղեկատվության ձեռնածություններից. չապատեղեկացնել ընտրողներին ընտրապայքարի դրվագների չափազանցմամբ, նենգափոխմամբ և/կամ խեղաթյուրմամբ:

14. Ընտրապայքարում լինել արժանապատիվ այդ արտահայտության այն ընկալմամբ, ինչ ժառանգել ենք մեր նախնիներից:

15. Չբացառելով սույն վարքականոնի որևէ դրույթի պատահական խախտումը, հանդես գալ տեղի ունեցած խախտման հանգամանքների բացատրությամբ և հանրության համար մեկնաբանել տեղի ունեցածը:

Lore Eco Club

ԱՂԱՔԱՆԳ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻՑ

Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Արմանիս թաղամասից 500 մետր հեռավորության վրա գործում է Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրը, որը շահագործվում է *«Սագամար»* ՍՊԸ-ի կողմից: Հանքի շահագործման ընթացքում հաճախակի դարձած պայթյուններն ինչպես ցերեկային, այնպես էլ գիշերային ժամերին և հանքում առկա քիմիական միացությունների պատճառով հարակից տների բնակիչների մոտ առաջացող գլխացավերը, սրտխառնոցը անհանգստություն են պատճառում տեղի բնակչությանը՝ հարուցելով նրանց դժգոհությունը: *«Շրջակա միջավայրի ազդեցության մասին»* ՀՀ օրենքի համաձայն՝ մինչ հանքավայրի շահագործումն անհրաժեշտ էր անցկացնել բնապահպանական փորձաքննություն և կազմակերպել հասարակական լսումներ՝ շահագրգիռ կողմերին իրազեկելու և նրանց տեսակետների մասին տեղեկանալու համար, որը չի կատարվել:

«Լոռե» էկո-ակումբ բնապահպանական կազմակերպությունը, ելնելով *«Տեղեկատվության ազատության մասին»* ՀՀ օրենքի դրույթներից և հաշվի առնելով խնդրի կարևոր նշանակությունը տեղի բնակչության համար, դիմել է ՀՀ բնապահպանության նախարարության պատկան ատյաններին, ինչպես նաև շահագործող ընկերությանը՝ հուզող հարցերի պարզաբանման խնդրանքով, սակայն ավելի քան երկու ամիս է անցել, մինչդեռ Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրի գործադիր տնօրեն Վ. Պապյանը հարցմանն այդպես էլ չի պատասխանել: ԲՊՏ պետի պաշտոնակատար Մ. Քամալյանի 2008 թ. հուլիսի 13-ի պատասխան գրությունն ընդհանրապես չի առնչվում մեր հարցմանը: Հարցմանը չի պատասխանել նաև բնապահպանության նախարարը:

ՄԱՆՅԱ ՄԵԼԻՔՋԱՆՅԱՆ
«Լոռե» էկո-ակումբ
ՀԿ-ի նախագահ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ

Սեպտեմբերի 5-ին «Հույսի կամուրջ» ՀԿ-ի գրասենյակում կայացավ Աղքատության հաղթահարման հանընդհանուր քարոզարշավի (ԱՀՀՔ) հայաստանյան դաշինքի հերթական հանդիպումը: Հանդիպման նպատակն էր քննարկել 2008 թ. սեպտեմբեր – հոկտեմբեր ամիսներին ընթացող 50-օրյա քարոզարշավին մասնակցելու հնարավորությունները, միջոցառումների ձևաչափի մշակումը, ինչպես նաև հայաստանյան դաշինքի աշխատանքների համակարգողի ընտրությունը:

Հանդիպման մասնակիցները որոշել են այս տարվա միջոցառումները մարզեր տեղափոխել, մասնավորապես՝ առաջարկ է եղել Գյումրու Թատերական հրապարակում երեխաների համար կազմակերպել աղքատության թեմայով նկարչական աշխատանքների և շարադրությունների մրցույթ՝ հետագայում լավագույն նկարների ցուցահանդես-վաճառք կազմակերպելով ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ: Բոլոր անդամ կազմակերպությունները նմանատիպ միջոցառումներ կկազմակերպեն նաև իրենց մարզերում:

Նախատեսվեց սեպտեմբերից մինչև հոկտեմբերի 17-ը ընկած ժամանակահատվածում ծրագրել և իրականացնել Աղքատության հաղթահարման հանընդհանուր քարոզարշավին նվիրված միջոցառումների շարք:

Դաշինքը համակարգողներ ընտրեց Գագիկ Թորոսյանին (*Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն*) և Նաիրա Առաքելյանին (*Արմավիրի զարգացման կենտրոն*):

ՈՉ ԹԵ «ԽՈՍՐՈՎ», ԱՅԼ «ԳԻԼԱՆ»

Մամուլի որոշ միջոցներ տեղեկություն են տարածել այն մասին, որ *«Խոսրովի անտառ»* պետական արգելոցի տարածքում շինարարական աշխատանքներ են ընթանում:

Բնապահպանության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնից հայտնում են, որ շինարարությունը կատարվում է ոչ թե *«Խոսրովի անտառ»* պետական արգելոցի, այլ հարևանությամբ գտնվող *«Գիլան»* արգելավայրի տարածքում: Արգելավայրի որոշ տարածքներ կառավարության որոշմամբ տրվել են վարձակալության՝ տուրիզմի զարգացման նպատակով:

ՀՀ ԲՆ հասարակայնության հետ
կապերի բաժին

ԲՈՅԿՈՏ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի երրորդ գումարման ընտրություններում թեկնածություն չառաջադրելու և որևէ թեկնածություն չպաշտպանելու մասին

Մենք՝ ներքոստորագրյալ կազմակերպությունների ներկայացուցիչներս, ՀՄՀ-Հայաստան ծրագրի նախապատրաստական և իրականացման անցած փուլերում մեծ շահագրգռությամբ մասնակցել ենք ծրագրի հնարավոր թիրախների մշակմանը, Շահառուների խորհրդի (ՇԽ) կազմավորման կարգի մշակմանը, ընտրությունների կազմակերպմանն ու անցկացմանը, մոնիտորինգ և հանրային իրազեկում ենք իրականացրել՝ հնարավորինս ապահովելու ծրագրային գործընթացների թափանցիկությունը: Այդ ամենի հետ մեկտեղ, անցած 2 տարում ուշադրությամբ հետևելով Հազարամյակի մարտահրավեր Հիմնադրամ-Հայաստան ծրագրում քաղաքացիական հասարակության դերակատարությանը, որոշել ենք սեպտեմբերի վերջին կայանալիք ՇԽ-ի երրորդ գումարման ընտրությունների համար թեկնածուներ չհայտավորել և թեկնածություն չպաշտպանել՝ հետևյալ պատճառներով.

ՀՄՀ-Հայաստան ծրագրի հանրային հսկողության մարմինը՝ Շահառուների խորհուրդը, որ կոչված է պաշտպանելու ծրագրի 750.000 ուղղակի շահառուների շահերը, իր կանոնակարգում համակարգային թերություն ունի, ինչը էականորեն նվազեցնում է ՇԽ-ի առաքելության իրականացման արդյունավետության աստիճանը. քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ 15 անդամներից բաղկացած Շահառուների խորհուրդը ծրագրի գլխավոր մարմին՝ Կառավարման խորհուրդ (ԿԽ) է պատվիրակում 5 հոգու իր կազմից, որոնք շարունակում են միաժամանակ մնալ ՇԽ-ում՝ այդպիսով հանգեցնելով շահերի ակնհայտ բախման:

Անցած 2 տարվա ընթացքում ծրագրի ՇԽ-ի կազմից ԿԽ պատվիրակված մի քանի անդամներ մասնակցել են ծրագրային (կապալային) մրցույթների, ծրագրային միջոցներից պատվեր ակնկալելով, և բոլոր այդ մրցույթների անցկացման ժամանակամիջոցում մնացել են ՇԽ-ի ու ԿԽ-ի անդամներ: Բացի այդ, նրանք, մասնակցելով մրցույթներին, այդ մասին անհրաժեշտ չեն համարել տեղեկացնել Շահառուների խորհրդին: Շահերի այսօրինակ բախման քննադատություններին ի պատասխան, հայտատուները նշել են, թե իրենք ՇԽ-ից և ԿԽ-ից հրաժարական կտան միայն այն դեպքում, եթե մրցույթում շահեն:

2008 թվականի հուլիսի 23-ի նիստում[1] ծրագրի Կառավարման խորհուրդը միաձայն որոշել է դոլարի արժեզրկման և շինաշխատանքների թանկացման պատճառաբանություններով կրճատել ծրագրի ջրաշինարարական արդյունքները: Ջրաշինարարական արդյունքների կրճատումները, զանազան մեթոդաբանական հաշվարկներով, կազմում են 50-70%: Այս որոշմանը ԿԽ-ի պետական պաշտոնյաների հետ միաձայն կողմ են քվեարկել նաև ՇԽ-ից ԿԽ պատվիրակված բոլոր 4 անդամները[2]: Այս կրճատման որոշումից առաջ ՇԽ-ի կարծիքն ու դիրքորոշումը չեն կամեցել իմանալ ոչ միայն ԿԽ-ի անդամները, այլև ծրագրի իրականացման ՊՈԱԿ-ը: Նման կրճատումն ուղղակիորեն և խստորեն վնասում է հարյուրհազարավոր գյուղացիների և ֆերմերների շահերին: Այնինչ, մի կողմից՝ ծրագիրը պլանավորող և նախապատրաստող աշխատանքային խումբը պարտավոր էր ժամանակին պատշաճ կերպով կանխատեսել բոլոր հնարավոր ռիսկերը, իսկ, մյուս կողմից, կառավարությունը պարտավոր էր պահուստային կամ այլ միջոցներ ներդնել ծրագիրը չկրճատելու և գյուղացիներին հուսախաբ չանելու համար, մանավանդ երբ ծրագրի համաֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների առկայության մասին ՀՀ իշխանությունները բազմիցս են վստահաբար արտահայտվել:

ՇԽ-ի անցած 2 ընտրությունների ժամանակ քաղաքացիական հասարակության անունից են ներկայացել, ընտրել և ընտրվել մի ամբողջ խումբ կազմակերպությունների ղեկավարներ ու ներկայացուցիչներ, որոնք միաժամանակ աշխատում են պետական հիմնարկներում, արդյունքում՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրի խնդիրների լուծման գործում իրենց դիրքորոշումները հիմնականում համընկել են իշխանական պաշտոնյաների դիրքորոշումներին[3]: Դրանով շահագրգիռ հանրության մասնակցության գաղափարը նենգափոխվել է, և իրական շահառուների (ոչ թե մասնավոր շահ հետապնդողների) պաշտպանությունը խորհրդում դարձել է գրեթե անհնարին:

ՇԽ-ից համառորեն և հետևողականությամբ գաղտնի են պահվում ծրագրի ընթացքին և, հավանաբար, կասեցման կամ դադարեցման ռիսկերին վերաբերող ու ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված գաղտնիք չպարունակող այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են ՀՀ նախկին նախագահ Ռ. Քոչարյանի և գործող նախագահ Ս. Սարգսյանի նամակները՝ ուղղված ՀՄԿ գլխավոր գործադիր տնօրեն Ջ. Դանիլովիչին:

Վերոհիշյալ և այլ խնդիրների լուծման ուղղությամբ *«Գործընկերություն հանուն բաց հասարակության»* նախաձեռնության պաշտպանած ՇԽ երեք անդամների (Լևոն Բարսեղյան, Արթուր Սաքունց և Սեյրան Մարտիրոսյան) ներդրած ջանքերը հիմնականում ապարդյուն են եղել: Խնդիրների հնարավոր լուծումների նախաձեռնությունները ՇԽ-ի մեծամասնության ջանքերով տապալվել են:

Հազարամյակի մարտահրավեր կորպորացիան և կորպորացիայի հայաստանյան ներկայացուցիչները տեղյակ են վերոհիշյալ խնդիրներին, բայց էական ջանքեր չեն ներդրել դրանց լուծման համար և շոշափելի ազդեցություն չեն ունեցել ՇԽ-ի աշխատանքի արդյունավետության բարձրացման վրա:

Այսպիսով, մենք գտնում ենք, որ ՇԽ-ն իր կանոնակարգային ձևաչափով, ըստ էության, եղել ու մնում է որպես միջպետական համաձայնագրով պահանջվող՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ձևական մարմին և ոչ թե շահառուների շահերի պաշտպան, ու ի զորու է կարգավորել մանր ընթացակարգային հարցեր միայն:

Առաջիկայում առավել խիստ հսկողության տակ ենք պահելու ՀՄՀ-Հայաստան ծրագրի ընթացքը, ՇԽ-ի և ԿԽ-ի աշխատանքները և պարբերաբար հանրությանն ենք ներկայացնելու մեր դիտարկումները ծրագրի ընթացքի մասին:

Ստորագրել են 46 ՈԿԿ-ներ:

2008 թ. սեպտեմբերի 15

[1] Պաշտոնական արձանագրությունը. http://www.mca.am/new/armversion/pdf/GC%20minutes-32-arm.pdf

[2] Կարեն Նազարյան (Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական «Կլոր սեղան» հիմնադրամի նախագահ), նիստում լիազորված անձ՝ Կարինե Բաղդասարյան, Արայիկ Հովհաննիսյան (Հայաստանի ավագանիների ասոցիացիայի նախագահ), Վանիկ Սողոմոնյան (Ֆերմերների ազգային միավորման նախագահ), Աշոտ Ոսկանյան («Ագրոզարգացում» ՀԿ նախագահ, «Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ տնօրեն):

[3] 2007 թվականի ընտրությունների ժամանակ արձանագրվեց դեպք, երբ քաղծառայողը՝ ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության գլխավոր մասնագետը, թեկնածուական հայտում չնշելով իր պետական պաշտոնը, ընտրվել էր ՇԽ անդամ և մասնակցել Կառավարման խորհրդի 5 պատվիրակների ընտրության փակ-գաղտնի քվեարկությանը:

Նյու Յորքում ընթանում է ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 63-րդ նստաշրջանը: Օրակարգում ընդգրկված են թվով 155 հարցեր: Մարդու իրավունքների ոլորտի հարցերը հետևյալն են՝

1. Մարդու իրավունքների խորհրդի զեկույցը
2. Հոլոքոստի զոհերի հիշատակումը
3. Երեխայի իրավունքների պաշտպանությունը և պահպանությունը
ա) Երեխայի իրավունքների խրախուսում և պաշտպանություն բ) Երեխաների հարցերով հատուկ նստաշրջանի արդյունքներին հետամուտ լինելը
4. Բնիկ ժողովուրդների իրավունքների հարցը
ա) Բնիկների իրավունքների հարցը բ) Աշխարհի բնիկ ժողովուրդների իրավունքների միջազգային 2-րդ տասնամյակը
5. Ռասայական խտրականության հարցը ա) Ռասայական խտրականության, այլատյացության և անհանդուրժողականության վերացումը բ) Դուրբանի հռչակագրի և գործողությունների ծրագրի իրականացումը
6. Ազգերի ինքնորոշման իրավունքը
7. Մարդու իրավունքների խրախուսումն ու պաշտպանությունը
ա) Մարդու իրավունքների գործիքների կիրառումը բ) Մարդու իրավունքների հարցեր, այդ թվում՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների արդյունավետությունն ապահովելու այլընտրանքային մոտեցումներ գ) Մարդու իրավունքների վիճակը և հատուկ ներկայացուցիչների և հատուկ զեկուցողների զեկույցները դ) Վիեննայի հռչակագրի և գործողությունների ծրագրի իրականացումը
ե) Հաշմանդամների իրավունքների համաձայնագիրը

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ 12 ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ընդունվել է Համաշխարհային բժշկական միությունների 17-րդ գլխավոր վեհաժողովի կողմից, ԱՄՆ, Նյու Յորք, 1963 թ., հոկտեմբեր:

Լրացվել է 35-րդ Համաշխարհային բժշկական միության կողմից, Իտալիա, Վենետիկ, 1983 թ., հոկտեմբեր:

Ներածություն

Երկրագնդի վրա գործում են առողջապահության տարբեր համակարգեր՝ լրիվ ինքնակառավարվողից մինչև բացարձակ պետական:

Որոշ երկրներում այդ օգնությունը ցուցաբերվում է հատկապես դրա կարիքն ունեցողներին, մյուսներում զարգանում է բժշկական ապահովագրության համակարգը, այլ երկրներ ընթացել են առողջության պահպանման համալիր կազմակերպմամբ: Մասնավոր ձեռնարկումների և պետական քաղաքականության տարբեր համադրումներն առողջապահության ոլորտում ստեղծում են բժշկական օգնություն ցուցաբերելու բազմաթիվ հնարավորություններ:

Իդեալական դեպքում պետք է ապահովել առավել ժամանակակից և բարձրակարգ բժշկական օգնություն՝ ընտրության լայն հնարավորություններ ստեղծելով թե՛ հիվանդի, թե՛ բժշկի համար:

Սակայն այս ձևակերպումն ընդհանուր բնույթ ունի և, ցավոք, սակավ օգտակար է տվյալ երկրի որոշակի առողջապահական խնդիրները լուծելիս:

Համաշխարհային բժշկական միությունը իր պարտքն է համարում պաշտպանել բժշկական մասնագիտության և պրակտիկայի հիմնական սկզբունքները, հետևաբար առանց գնահատելու ազգային առողջապահության առանձին համակարգերը՝ պայմաններ է ստեղծում, որոնց ճշգրիտ կատարումն անհրաժեշտ է բժշկական միության և պետական համակարգի համատեղ արդյունավետ աշխատանքի համար:

Սկզբունք 1. Ցանկացած առողջապահական համակարգում բժիշկների աշխատանքային պայմանները որոշվում են ըստ հասարակական բժշկական կազմակերպությունների դիրքորոշման:

Սկզբունք 2. Ցանկացած ա-ռողջապահական համակարգ հիվանդի համար պետք է ապահովի բժշկի ընտրություն, իսկ բժշկի համար՝ հիվանդի ընտրություն՝ չոտնահարելով բժշկի և հիվանդի իրավունքները: Ազատ ընտրության հնարավորությունը պետք է պաշտպանվի նաև այն դեպքերում, երբ օգնությունը ցուցաբերվում է բժշկական կենտրոններում: Բժշկի մասնագիտական և էթիկական պարտականությունն է ցանկացած մարդու անհապաղ բժշկական օգնություն ցուցաբերել առանց խտրականության:

Սկզբունք 3. Առողջապահության ցանկացած համակարգ պետք է բաց լինի յուրաքանչյուր բժշկի համար. ոչ մի բժշկի ոչ մի պարագայում չի կարելի ստիպել աշխատել նրա համար անընդունելի պայմաններում:

Սկզբունք 4. Բժիշկը պետք է ազատ լինի իր գործունեության տեղի որոշման հարցում և սահմանափակվի միայն իր մասնագիտության շրջանակներով: Բժշկական միությունը պետք է օգնի պետությանը երիտասարդ բժիշկներին կողմնորոշել աշխատելու այն շրջաններում, որտեղ նրանց կարիքն ամենաշատն է զգացվում: Նման շրջաններում աշխատող բժիշկներին պետք է ցուցաբերվի այնպիսի օգնություն, որ նրանց գործունեությունն ու կենսամակարդակը համապատասխանեն մասնագիտությանը:

Սկզբունք 5. Բժշկական միությունը պետք է համապատասխանաբար ներկայացվի բոլոր պետական ինստիտուտներում, որոնք գործ ունեն առողջության պահպանման հետ:

Սկզբունք 6. Բոլոր նրանք, ովքեր մասնակցում են բուժման գործընթացին կամ վերահսկում են այն, պետք է գիտակցեն, հարգեն և պահպանեն բժիշկ-հիվանդ հարաբերություններում գաղտնիությունը:

Սկզբունք 7. Անհրաժեշտ է բժշկին ապահովել բարոյական, տնտեսական և մասնագիտական անկախությամբ:

Սկզբունք 8. Եթե բժշկական ծառայության հոնորարները որոշված չեն բժշկի և հիվանդի միջև, կազմակերպությունը, որը ֆինանսավորում է բժշկական ծառայությունները, պարտավոր է համապատասխանաբար փոխհատուցել բժշկի աշխատանքի դիմաց:

Սկզբունք 9. Բժշկի հոնորարի չափը պայմանավորված պետք է լինի բժշկական ծառայության բնույթով: Բժշկական ծառայության արժեքը պետք է որոշվի բժշկական միության ներկայացուցիչների մասնակցությամբ և համաձայնությամբ, ոչ թե տվյալ բժշկական ծառայությունը ֆինանսավորող կազմակերպության կամ պետության միակողմանի որոշմամբ:

Սկզբունք 10. Բժշկի մատուցած բժշկական ծառայության որակի և արդյունավետության գնահատականը, նրա աշխատանքի ծավալը և որակը պետք է որոշեն միայն բժիշկները, որոնք ղեկավարվում են հիմնականում տարածաշրջանային, այլ ոչ ազգային չափանիշներով:

Սկզբունք 11. Հիվանդի շահերից ելնելով՝ չի կարելի սահմանափակել բժշկի իրավունքները դեղորայքի նշանակման կամ բուժման որևէ մեթոդի ընտրության հարցում՝ ժամանակակից չափորոշիչներին համապատասխան:

Սկզբունք 12. Բժիշկը պետք է ակտիվորեն ձգտի իր գիտելիքների խորացմանն ու մասնագիտական մակարդակի բարձրացմանը:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ

ԼՈՌԻՆ՝ ՀՆԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆՕՐԱՆ

Արդեն երրորդ տարին է, ինչ ՀՀ ԳԱԱ Հնագիտության ինստիտուտի մասնագետները, համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ, հնագիտական պեղման աշխատանքներ են իրականացնում Լոռու մարզում՝ Վանաձորում (Թագավորանիստ բլուր), Գոգարանում և հնագույն Լոռե բերդաքաղաքում:

Իսկ Հակոբ Սիմոնյանի ղեկավարած «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագիտական խումբը (ղեկ. Արման Նալբանդյան) արդեն սկսել է Շիրակամուտի Չիչխանավանքի խոնարհված եկեղեցու պեղման աշխատանքները՝ որպես հաջորդ տարի նախատեսվող վերականգնման աշխատանքների նախապատրաստական փուլ:

Վանաձոր Թագավորանիստ բլուր

Թագավորանիստ բլրի հնագիտական պեղման աշխատանքներն այս տարի ընթանում էին ոչ մեծ ծավալով: Մասնագիտական խմբի աշխատանքները ղեկավարում էր վերոհիշյալ ինստիտուտի գիտաշխատող Արմինե Հայրապետյանը:

Պատմական միջավայրի պահպանության Լոռու մարզային ծառայության աշխատակիցներիս հաճախակի այցելությունների ընթացում Ա. Հայրապետյանը մեզ ցույց էր տալիս առավել արժեքավոր գտածոների նմուշները՝ պղնձեդարյան և վաղ բրոնզեդարյան շրջանին պատկանող աշխատանքային գործիքներ, կաղապարներ, կնիքներ, նետասլաքներ, ոսկրե ասեղ-հերյուն, ուլունքներ, 5 մ և ավելի խորությամբ գտնվող կացարաններ ու ըստ հնագույն ծեսերի կատարված թաղումների հետքեր:

Հնագույն կացարան Թագավորանիստում

Առավել հետաքրքիր ու արժեքավոր էր ցատկող եղնիկի պատկերով՝ սարդիոն քարից կերտված կնիք մատանու նմուշը:

Թագավորանիստ բլուրը մշտապես համարվել և այժմ էլ համարվում է բազում գաղտնիքներ պարունակող պղնձեդարյան բնակատեղի-ամրոց:

Գոգարան Սալարկղային դամբարաններ

Կարծիք կա, որ **Գոգարանի հին բնակատեղիում է գտնվել տարածաշրջանի ամենաընդարձակ հնագույն քաղաքներից մեկը**. այդ են վկայում հնագույն քաղաքակրթության մշակութային արժեքներն ու հնագիտական բացառիկ արժեք ներկայացնող գտածոները:

Հնագետները թեև վաղուց են ծանոթ այս հնավայրին, բայց նրանց պեղած և հետազոտած հերթական դամբարանը բացառիկ կառուցվածք ուներ: Մասնագետները նշեցին, որ դամբարանից հայտնաբերված նյութը մեծաքանակ չէր և ոչ էլ արտասովոր: **Դամբարանի յուրահատկությունը նրա ճարտարապետական արտասովոր կառուցվածքն է, որպիսին մինչ այժմ չի հանդիպել**:

Օձաձև ապարանջան՝ հայտնաբերված Լոռեբերդում կատարված պեղումների ընթացքում

Շրջակա տարածքի մյուս դամբարաններն իրենց կառուցվածքով եղել են հիմնահողային, իսկ սա սալարկղային դամբարան է, որն, ըստ հայտնաբերված նյութերի (դաշույնի շեղբ և այլն), կարելի է թվագրել Ք.ծ.ա. վաղ երկաթի դարաշրջան: Բացի ննջեցյալի քայքայված աճյունից և խոնավությունից ժանգոտած ու քայքայված դաշույնի շեղբից՝ կային նաև խոշոր եղջերավոր կենդանու և մեկ այլ (առաժմ անհայտ) փոքր կենդանու ոսկորներ, սարդիոնե ուլունք և 8 մեծ ու փոքր խեցեղեն անոթներ:

Շրջանաձև շարվածք ունեցող դամբարանի կրոմլեխն ունի 14 մ տրամագիծ, իսկ կիսամշակ և կիսակորավուն տաշվածքին համապատասխան խոշոր քարերի շարքը երիզված էր փոքր կետաքարերով: Բացի այդ՝ դամբարանն ունի սալաքարային կրկնակի «զրահ», երիզված է 2-րդ՝ փոքր դամբանահորը, որի մեջ ամփոփված են թաղման ծեսի համար նախատեսված տարբեր չափսերի 7 խեցեղեն անոթներ, իսկ հանգուցյալի մարմնի մոտ (բացի վերոհիշյալից) դրված էր միայն կավե մեկ մեծ աման:

Խոշոր քարերից մեկի վրա առկա են երկրաչափական տարբեր գծանշաններ՝ եռանկյուն նշանների շարք, հավասարաթև խաչ շրջագծի մեջ և ուրվագծային այլ նշաններ:

Պեղման վայր ժամանած համայնքի ղեկավարները (համայնքապետը, քարտուղարը, դպրոցի տնօրենը) և տարեց գոգարանցիները պատկառանքով ու երախտագիտությամբ են հիշում Գրիգոր Մարկոսյանին, որն անձնուրացությամբ ելավ «խորհրդային մեքենայի» դեմ՝ փրկելով հնագույն դամբարանները ավերումից:

*ԽՍՀՄ նորաթուխ **պլան**ային տնտեսական ծրագրերն այնպես էին կազմվում, որ, իրենց իսկ խոսքով, **իսպառ արմատախիլ արվեին «բուրժուական» ժառանգություն համարվող բոլոր մնացուկները,** այն է՝ մեր մշակութային արժեքները՝ մեզ արմատից կտրելու նպատակով:*

*Իսկ **երիտ**-կոմսոմոլների կոմ**երիտ**ակտիվն էլ իրականացնում էր ավագների հանձնարարականները և կազմակերպում համատարած **մշակութային ջարդեր**՝ ավերելով եկեղեցիներ, ջարդելով խաչքարեր և տակնուվրա անելով հնագույն դամբարանադաշտերը:*

Սալարկղային դամբարան Գոգարանում

Լոռեբերդի հնագույն դամբարանները

Շուրջ 40 տարի ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Սեդա Դեվեջյանը Լոռե բերդաքաղաքին կից հնագույն դամբարանադաշտերում պեղել է բազմաթիվ դամբարաններ և հայտնաբերած հարուստ նյութերի վերաբերյալ հրատարակել բազմաթիվ հոդվածներ ու գրքեր (2009 թ. կնշվի Լոռեբերդի պեղումների 40-ամյակը):

2008 թ. աշխատանքներում նրան օգնում էին նույն ինստիտուտի ավագ գիտաշխատող Սուրեն Հոբոսյանը և ապագա հնագետ ուսանողներ:

Հետախուզական պեղումներից հետո նրանք ընտրել էին 2 ոչ մեծ դամբարաններ, որոնք արդարացրին մասնագետների սպասելիքները:

Պեղված դամբարաններից հայտնաբերվել են անհաշիվ սպասք, խեցեղեն անոթներ, սափորներ, կժեր, արծաթե թասեր, սանդեր, դաշույններ, նիզակներ, նետասլաքներ, եռաժանի (1 ժանիքն արդեն քայքայված), սարդիոնե և այլ ուլունքներ, **բրոնզե զանգուլակներ, սանձեր, արծաթե թասեր, արծաթե և բրոնզե երկգլխանի օձաձև ապարանջաններ, ոսկե թիթեղիկներ և փոքրիկ կախիկ հիշեցնող իշխանական մի հրաշք կնիք...**

Լոռեբերդի իշխանական դամբարանը

Կնիքի կիսաթափանց-սպիտակավուն քարե գլանակի ծայրերին մեկական ոսկե վահանաձև նախշազարդ կափարիչներ կային՝ անցկացված միջանցիկ ոսկե նուրբ ու բարակ ձողի վրա: Կնիքի դրոշմած հետքը պատկերում էր ետնաթաթերին դեմ հանդիման կանգնած երկու այծյամներ, մեջտեղում՝ ծառ...

Գտածոն, ինչ խոսք, հնադարյան արվեստի մի հրաշալի նմուշ է և մեծ արժեք ունի (նաև մանրանկարչության ու մանրաքանդակի ասպարեզում):

«Անցյալում շատ ենք հանդիպել տարբեր ժամանակաշրջաններում թալանված ու գանձախուզված դամբարանների,- ասում է **ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող Սուրեն Հոբոսյանը,**- բայց այս տարի պեղած դամբարաններն անվնաս էին մնացել և արդարացրին մեր սպասելիքները»:

Ցավալի այդ խնդիրը՝ ***հուշարձանների տարածքների նկատմամբ ոտնձգությունների դեպքերն են:*** Երբեմն դա խրախուսվում կամ անտեսվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, որի հետևանքով անգամ օտարվում կամ վաճառվում է հուշարձանի տարածքը, վերածվում քարհանքի (Չորագետի կիրճում՝ դամբարանադաշտի եզրին, առկա է փաստը), արտադրամասի կամ ծառայում այլ նպատակի, երբեմն էլ հնագույն գերեզմանոցներում կատարվում են գերեզմանատեղերի հատկացումներ և նոր թաղումներ:

Կարծում ենք՝ Լոռեբերդն ու շրջակա դամբարանադաշտերն այն տարածքներն են, որ արժանի են հատուկ ուշադրության (նաև ՏԻՄ-ի կողմից), և միայն սրտացավ մոտեցմամբ է հնարավոր պահպանել այս հնագույն ու բարձրարժեք պատմական միջավայրը:

Կարելի է միայն մի հետևություն անել, այն է՝ օր առաջ ընդունել Լոռու մարզային ծառայության առաջարկը և **Լոռեբերդն իր հարակից դամբարանադաշտով դարձնել պատմամշակութային արգելոց-թանգարան**: Ի դեպ, արգելոց-թանգարան ստեղծելու ծրագրի նախագիծը շուրջ 2 տարի է, ինչ դեգերում է Մշակույթի նախարարություն - կառավարություն անցման կուլիսներում...

ՀՐԱՉԻԿ ՄԱՐՈՒՔՅԱՆ
Պատմական միջավայրի պահպանության Լոռու մարզային ծառայության գիտաշխատող
լուսանկարները՝ հեղինակի

Հոգեւոր

ՎԱՆԱՁՈՐԻ ՍԲ. ԳՐ. ՆԱՐԵԿԱՑԻ ԱՌԱՁՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԵՈՐ ՀՈՎԻՎ ՏԵՐ ՎԱՀԱՆ ՔԱՀԱՆԱ ԱԶԱՐՅԱՆԻ 2008 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի ՔԱՐՈԶԻՑ

«Որքան շատ բաժնեկից լինենք Քրիստոսի չարչարանքներին, այնքան ավելի մեծ կլինեն Նրա օգնությունն ու մխիթարությունը»:
Բ Կորնթ. 1:5

Սիրելի՛ հավատացյալ եղբայրներ և քույրեր:

Հայ եկեղեցին այսօր մեծարում է Աստվածամորը՝ տոնելով նրա գոտու գյուտը:

Քրիստոնեության մեջ որոշակի առարկաների հանդեպ ակնածանքը խոնարհումն է, որով հավատացյալն ստանում է Աստծո Սուրբ Հոգու շնորհները և վաստակում Տիրոջ ողորմությունը:

5-րդ դարում Երուսաղեմում էր գտնվում Ս. Տիրամոր գոտին, որով շատ բորոտներ, ցավագարներ, հիվանդներ են բժշկվել: Այնուհետև գոտին տեղափոխում են Բյուզանդիա՝ Կ. Պոլիս, կառուցվում է մի նոր եկեղեցի, և Սուրբ գոտին տեղադրվում է այնտեղ:

Ընդհանրապես, նվիրական ու սուրբ է համարվել ցանկացած զգեստի մաս, որ կրել, գործածել են սրբերը, քանզի նաև դրանց ու սրբերի աղոթքների միջոցով էր Աստված իր շնորհները տալիս եկեղեցուն:

Աստված մեզ մխիթարում է զանազան կերպարով, նաև առարկաների միջոցով: Բերենք մի օրինակ Ավետարանից: Երբ Քրիստոս քայլում էր ժողովրդի միջով, տեռատեսությամբ հիվանդ մի կին մտածում է. *«Եթե միայն Նրա զգեստին դիպչեմ, կբժշկվեմ»:* Եվ երբ դիպչում է, Քրիստոս զգում է, որ իրենից զորություն հեռացավ: Հարցնում է. *«Ո՞վ դիպավ զգեստիս»:* Առաքյալները զարմանում են, թե՝ բազում մարդիկ կան շուրջը խռնված, յուրաքանչյուրը կարող էր դիպչել: Ի վերջո, կինը վախեցած խոստովանում է, որ ինքն է դիպել զգեստին: Եվ Տերն ասում է նրան. *«Դու՛ստր, քո հավատը փրկեց քեզ»:*

Հիշենք մեր բազու՜մ-բազու՜մ սրբերի՝ Աստծո զորությամբ լեցուն շիրիմները, մասունքները: Հիշենք, թե մարգարեներն ինչպես էին բժշկում հիվանդներին, ինչպես էր Տերն արգելում օտարներին մտնել վկայության խորան՝ սրբություններին չդիպչելու համար, եթե պատրաստ չեն: Այդպես էլ մենք, երբ պատրաստ չենք հաղորդության, պիտի չմոտենանք Քրիստոսի Մարմնին ու Արյանը, որ մեր քիմքին և լեզվին տրվում է հացի և գինու տեսքով:

Օծությամբ Աստծո շնորհները հաղորդվում են առարկաներին: Դրանք այլևս սոսկ առարկաներ չեն, ինչպես Ուխտի Տապանակը՝ տաճարի սրբազան անոթները, նկարները, խաչերը, խորանը, Սուրբ Ավազանը և այլն, վերածվում են շնորհընկալ առարկաների: Փրկչի հագուստը ճշմարիտ հավատով մոտեցողի համար դարձավ փրկվելու միջոց: Պարտադիր չէր բարձրաձայն թախանձանքը՝ *օգնի՛ր ինձ*: Նա հավատով հպվեց Տիրոջ զգեստին, և հագուստը դարձավ շնորհի փոխանցող ու բժշկման միջոց:

Շատերը, մոլորվելով ճշմարիտ հավատքից, մերժում են խաչը, Ավետարանը, սրբազան իրերը համբուրելը, մինչդեռ դրանք Աստծո շնորհի փոխանցողներն են: Դրանք մեր սուրբ տաճարները, եկեղեցիներն են, որ օծությամբ սովորական շինությունից վերածվում են աստվածընկալ Տաճարների: Այդ է պատճառը, որ եկեղեցու հարկի տակ մշտապես մի խորհրդավոր հանդարտություն ու խաղաղություն է իջնում մեր հոգիներին, քանզի այնտեղ Ինքն Աստված է ներկա: Սրա համար է, որ մարդիկ համբուրում են օծյալ եկեղեցիների պատերը՝ այն պատկերացմամբ, ասես համբուրում են Իրեն՝ Քրիստոսին: Ողջույն են տալիս Քրիստոսին և երկրպագությամբ մոտենում Աստծո սուրբ խորանին:

Հիշենք, թե Սուրբ Գրիգոր Նարեկացու գերեզմանն ինչպես էր մեռյալներին հարություն տալիս, սովյալներին կերակրում՝ հրաշագործությամբ առատացնելով նրանց ձեռքի հացը: Այս բոլոր շնորհներն Աստված է տալիս՝ զանազան առարկաների ու կերպերի միջոցով: Սրբերը չարչարակից էին Քրիստոսին և անմնացորդ նվիրված Նրա անվանն ու Ավետարանին, դրա համար էլ Քրիստոս բարեգութ Տերը, իրեն չարչարակից եղողներին մխիթարելով ու զորացնելով, նրանց միջոցով էլ մեզ՝ իր անվանը հավատացողներին է զորացնում ու օգնական դառնում:

Եվ դա տեղի է ունենում սրբերի անվան տաճարներն ուխտի գնալով, նրանց օգտագործած զգեստներին ու մասունքներին, նշխարներին ու սրբություններին հպվելով ու դրանք համբուրելով:

Իսկ Տիրամայր Մարիամն այնպիսի բաժնեկցություն ունեցավ Աստծուն, որի նմանը չի եղել երբեք: Եթե անշունչ հագուստը, Քրիստոսի վրա լինելով, կարող է բժշկել, ապա որքան առավել սուրբ է Տիրամայրը, որ կրեց իր մեջ Իրեն՝ Քրիստոսին:

Ամենօրհնյալ Սրբուհին գերագույնն է, նրա համար բառեր ու բացատրություններ հարկավոր չեն, քանզի նա ինքնին Աստծո բնակության տաճարն էր, այն միջնորդը, ում միջոցով աշխարհը փրկվեց, և մենք խաչի ու հարության ճանապարհը տեսանք՝ փրկության արժանանալով: Քանի որ Աստված է սնվել նրա միջոցով և նրա միջոցով փրկություն բերել աշխարհին, նրա ամեն մի մասունք սուրբ, սրբացնող ու առաջնորդող է:

Գերապատիվ փառք և երկրպագություն ամենօրհնյալ Սրբուհուն, որ Աստծո շնորհներն է փոխանցում մեզ, երբ նրանից բարեխոսություն ենք խնդրում:

Թող երկնավոր Տերը հարատև շնորհներով լցնի մեր Առաքելական սուրբ եկեղեցին, առաջնորդի մեզ և ճառագի իր սրբությունը՝ բժշկելով մեզ մեր մեղքերի հիվանդությունից, ազատելով տառապանքներից և տվայտանքներից: ԱՄԵՆ:

ՀՈԳԵՎՈՐ ՏՈՆԱՑՈՒՑՑ

Սեպտեմբերի 27 - Տոն Սուրբ Գևորգի
Սեպտեմբերի 28 - Տոն Վարագա Խաչի

ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԻԿ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՄԱՍԻՆ

Անձնական կամ հասարակական կյանքի համար նշանակալից որևէ արարք վճռելուց առաջ արժե սեփական հոգում կյանքի կոչել Քրիստոսի բարոյական կերպարը, սևեռվել նրա վրա ու հարց տալ, թե կարո՞ղ էր Նա գործել այդ կամ այլ խոսքով՝ կտա՞ իր հավանությունը, կօրհնի՞ կատարել այդ, թե՞ ոչ: Բոլորին առաջարկում եմ քննության այս կերպը. այն չի խաբի: Բոլոր կասկածելի իրավիճակներում, եթե տակավին սթափվելու և մտածելու հնարավորություն կա, հիշեցե՛ք Քրիստոսին, պատկերացրեք, որ Նա ողջ է, ինչպիսին և կա, ու Նրա՛ն հանձնեք ձեր կասկածների ամբողջ բեռը:

Վ. Ս. Սոլովյով (1853-1900)
ռուս փիլիսոփա և հրապարակախոս

ԳԻՐՔ ԱՌԱԿԱՑ

ԽՈՒՍԱՓԵԼ ԾՈՒԼՈՒԹՅՈՒՆԻՑ

6 Մրջունի մո՛տ գնա, ո՛վ ծույլ,
նախանձի՛ր նրա գործերին եւ իմաստուն եղիր նրանից աւելի.
7 քանզի նա ո՛չ հողագործ է, ո՛չ վերակացու
եւ ո՛չ էլ գլխին տէր ունի,
8 բայց ամռանը նա պատրաստում է իր ուտելիքը
եւ հնձի ժամանակ ամբարում է իր առատ պաշարը:
Կամ մեղուի մո՛տ գնա,
տե՛ս, թէ ինչպէ՜ս գործունեայ է նա
եւ թէ ինչպիսի ջանասիրութեամբ է գործում,
որի վաստակը մատուցում են թագաւորներին եւ տնանկներին՝
բժշկութեան համար:
Թէպէտեւ թոյլ է ուժով,
բայց սիրելի է ու մեծարելի բոլորի համար,
որովհետեւ ինքը յարգեց իմաստութիւնը եւ արժանի եղաւ
յարգանքի:
9 Մինչեւ ե՞րբ պիտի գամուած մնաս, ո՛վ ծոյլ,
կամ ե՞րբ պիտի զարթնես քնից:
10 Մի քիչ քնով ընկնես, մի քիչ նստես,
մի քիչ ննջես, մի քիչ էլ ձեռքերդ հանդչեցնես կրծքիդ,
11 եւ, ահա, աղքատութիւնը, ինչպէս չար ուղեւոր, կը հասնի քեզ,
եւ կարիքը, իբրեւ ժիր սուրհանդակ, կը կանգնի դռանդ:
Բայց եթէ ծոյլ չլինես,
ապա քո ամառը պիտի հասնի աղբիւրի նման,
եւ կարիքը, ինչպէս ինքնահալած չարամիտ այր, պիտի փախչի
հեռու:

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՃԱՇՈՒ ԸՆԹԵՐՑՎԱԾՆԵՐ

Սեպտեմբերի 16-30

16 – Գշ. Տօն Եկեղեցւոյ: Բրք 4.36-5.9, Եբ 3.1-6, Հհ 2.12-22
17 – Դշ. Տօն Եկեղեցւոյ: Սփ 3.14-18, Եբ 9.11-15, Մտ 16.13-19
18 – Եշ. Տօն Եկեղեցւոյ: Ես 2.1-6, Եբ 12.18-27, Մտ 21.12-17
19 – Ուր. Պահք: Տօն Խաչի: Զք 14.5-11, Փպ 2.5-11, Հհ 19.16-22
20 – Շբ. Տօն Խաչի: Ես 51.4-11, Ա Տմ 6.13-16, Հհ 7.37-52
21 – Կիր. Բ կիր. զկնի Խաչի: Բարեկենդան Սբ Վարագայ Խաչի Պահոց: Ես 14.3-17, Բ Կր 10.18-11.10, Մր 10.1-12
22 – Բշ. Պահք: Սրբոցն՝ Մամասայ, Փիլիկտիմոնի և Սիմէոնի Սիւնակեցւոյն: Առ 8.9-11, Ես 55.10-13, Բ Կր 5.1-5, Ղկ 21.12-19
23 – Գշ. Պահք: Սրբոց կուսանացն՝ Փեփրոնեայ, Մարիանեայ և Շուշանայ՝ դստերն Մեծին Վարդանայ: Առ 23.15-25, Օս 14.6-8, Բ Կր 6.16-7.1, Ղկ 6.20-23
24 – Դշ. Պահք: Բ Կր 11.10-23, Մր 10.17-23
25 – Եշ. Պահք: Սրբոց հայրապետացն՝ Բարաղամու, Անթիմոսի և Երանոսի: Իմս 10.9-12, Մղ 2.5-7, Ա Պտ 5.1-7, Հհ 10.11-16
26 – Ուր. Պահք: Բ Կր 11.30-12.9, Մր 10.28-33
27 – Շբ. Սրբոցն՝ Գէորգայ զօրավարին, Ադոկտոսի և Ռոմանոսի երգեցողին: Իմս 8.19-9.5, Ես 42.1-8, Բ Կր 1.3-7, Ղկ 12.2-9
28 – Կիր. Գ. կիր. զկնի Սրբոյ Խաչի: Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի: Առ 3.18-26, Ես 65.22-25, Գղ 6.14-18, Մտ 24.30-36
29 – Բշ. Սրբոյն Դաւթի Դունեցւոյն և սրբոց վկայիցն Ղամբէոսի և Ղամբէուհւոյն: Առ 13.1-7, Մք 7.18-20, Եբ 12.1-7, Ղկ 13.22-30
30 – Գշ. Սրբոցն՝ Եւստաթէոսի և կնոջ նորա Թէոփիստեայ և երկուց որդւոյն և սրբոց կուսանացն Երմոնեայ և Նեքտարիոնեայ: Ողբ 3.22-56, Բ Տմ 3.10-15, Մտ 5.1-12

ԿԻՊՐԻԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՎ ՀՈՒՍՏԻՆԻԱ ԿՈՒՅՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Կիպրիանոսն ազգությամբ ասորի մեծահարուստ և իմաստուն մարդ էր, իսկ Հուստինիան հավատքով քրիստոնյա էր՝ Եդեսիոսի կուռքերի քրմի դուստրը: Նա քրիստոնեական կրոնն ու հավատքը սովորել էր Պրոկղ սարկավագից, իր ծնողներին ևս դարձի էր բերել դեպի քրիստոնեություն:

Մի երիտասարդ՝ Ագղավդիոս անունով, տեսնելով եկեղեցի գնացող Հուստինիա կույսին, տռփալից ցանկությամբ կամենում է կնության առնել նրան, ջանում բազում պատգամախոսների միջոցով, մեծ պարգևների խոստումներով հասնել իր նպատակին, սակայն չի հաջողում: Կույսն ասում է. *«Հարսնացել եմ Քրիստոսին և երկրավոր ամուսին չեմ ցանկանում»:*

Մի օր եկեղեցի գնալու ճանապարհին Ագղավդիոսը հանդիպում է կույսին և փորձելով բռնի տիրանալ նրան՝ անարգվում է նրանից և գլխիկոր հեռանում: Այնուհետև Ագղավդիոսը դիմում է Կիպրիանոս մոգին, երկու տաղանդ ոսկի տալիս նրան՝ Հուստինիայի հավանությանն արժանանալու համար: Կիպրիանոսը դև է ուղարկում աղջկա մոտ, որ նրան մեղքի մեջ գցի: Դևը Հուստինիային գտնում է աղոթքի պահին: Կույսը դևի դեմ խաչի նշան է հանում, և վերջինս երկյուղած փախչում է: Կիպրիանոսն այլ զորեղ դևերի է ուղարկում կույսի մոտ, որոնք ևս սարսափահար ետ են դառնում՝ ասելով. *«Խաչի նշանը հալածում է մեզ: Եթե մեր իշխանն ինքն էլ աներևույթ զորքերով գնա նրա դեմ, դարձյալ փախստական կլինի նրանից»:*

Կիպրիանոսը հալածում է դևերին և սկսում հավատալ Քրիստոսին՝ այրելով իր բոլոր մոգական գրքերը:

Նա մկրտվում է, դառնում սուրբ եկեղեցու դպիր, ապա՝ սարկավագ և մեկ տարի անց ձեռնադրվում է քահանա, 16 տարի անց՝ եպիսկոպոս և նստում հայրապետական աթոռին, իսկ Հուստինիա կույսին ձեռնադրում է սարկավագուհի:

Այդ ժամանակից ի վեր Սուրբ Կիպրիանոս հայրապետն սկսում է մարդկանց ուսուցանել քրիստոնեական կրոնն ու աստվածապաշտությունը, շատերին դարձի է բերում դեպի քրիստոնեական լույսը:

Մի օր «Արևելքի կոմսին» հայտնում են Կիպրիանոսի քրիստոնեացման լուրը: Կոմսը հրամայում է կապել նրան և Հուստինիային և տանել Դամասկոս: Այստեղ Կիպրիանոսը կոմսին պատմում է իր դարձի պատմությունը, սակայն վերջինս հրամայում է ուրանալ Քրիստոսին և դառնալ կուռքերին: Սակայն ապարդյուն: Կիպրիանոսը հանդիմանում, դատապարտում է կռապաշտների անաստված մոլորությունը, ուստի կոմսի հրամանով՝ նրան կախում են փայտից, մարմինը քերում երկաթե բրիչով: Հուստինիային նույնպես ենթարկում են խոշտանգումների: Երբ նրանց նետում են եռացող կաթսայի մեջ, շարունակ գոհանալով օրհնում են Աստծուն և անտեսում կաթսայի եռը: Աթանասիոս անունով մի մարդ այդ ժամանակ չի հավատում, թե աստվածային զորությամբ է, որ չեն այրվում նրանց մարմինները, ուստի նետվում է կաթսայի մեջ և անմիջապես այրվում:

Եռացրած կաթսայից սրբերը ելնում են անվնաս: Շատերն այդպես հավատում են Քրիստոսին: Այնուհետ նրանց տանում են Նիկոմիդիա քաղաք՝ Դեկոս թագավորի մոտ, ում հրամանով էլ գլխատվում ու նահատակվում են ի Քրիստոս:

Հռոմեացի նավավարները նահատակների մարմիններն ու նահատակության պատմությունը տանում են Հռոմ, հանձնում մի կնոջ, ով սրբերի նշխարները պատվով դնում է մի նշանավոր վայրում, ուր բազում նշաններ են երևում ի փառս մեր Քրիստոս Աստծո:

Քրիստոս Աստված, սրբերիդ աղոթքներով և բարեխոսությամբ ողորմի՛ր բոլոր հավատացյալներին:

«Յայսմաւուրք»
Գրաբարից արևելահայերենի փոխադրեց
ԽՈՐԵՆ սարկավագ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՏԵՂԵԿՈՒՅԹ - ԱԶԴ - ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«10 ԴՊՐՈՑԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ» ՀԱՆՐՕԳՈՒՏ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՌՈՒՍԱԼ ընկերությունը ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հետ համատեղ հայտարարում են *«10 դպրոցական ծրագիր»* երկրորդ մրցույթի մեկնարկը, որի նպատակն է դպրոցականներին և ուսուցիչներին ներգրավել համատեղ հանրօգուտ աշխատանքներում: Ծրագրին տեղեկատվական աջակցություն է ցուցաբերում ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

Երևան քաղաքի բոլոր 7-11-րդ դասարանների աշակերտներին հրավիրում ենք մասնակցելու այս յուրահատուկ մրցույթին՝ ներկայացնելով միջդպրոցական, համադպրոցական և դասարանային ծրագրեր: Մրցութային հանձնաժողովների կողմից կընտրվեն 10 լավագույն ծրագրերը, որոնցից յուրաքանչյուրի իրականացման համար կտրամադրվի 1.000.000 դրամ:

Դիմումների ներկայացման վերջնաժամկետն է 2008 թ. հոկտեմբերի 3-ը, ժ. 18.00:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագիր հայաստանյան ծրագրի ներկայացուցիչ Արշալույս Վարդանյանին:

Հեռ. (010) 547268

Մրցույթի մասին մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ նաև հետևյալ կայքերից՝
http://www.gc.am
http://www.armedu.am
http://www.rusal.ru/UserFiles/File/Documents_Armenia.pdf

Հայտարարվում է «Լավագույն գիտական աշխատանք» հանրապետական մրցույթ

ՀՀ ԳԱԱ-ն, Համաշխարհային հայկական կոնգրեսը (ՀՀԿ) և Ռուսաստանի հայերի միությունը (ՌՀՄ) հայտարարում են *«Լավագույն գիտական աշխատանք»* հանրապետական մրցույթը, որը կանցկացվի 2008 թ. հոկտեմբերի 15-ից նոյեմբերի 15-ը:

Արդյունքները կամփոփվեն 2009 թ. փետրվարի 20-ին՝ ստեղծվելիք անկախ փորձագիտական ինստիտուտի կողմից:

Սահմանված են 5 մրցանակներ՝ հայագիտության, հասարակական գիտությունների, ճշգրիտ գիտությունների, ինֆորմատիկայի ու տեխնիկական գիտությունների և բնական գիտությունների ոլորտներում:

ՀՀ ԳԱԱ Գիտության զարգացման հիմնադրամի տնօրեն Հրանտ Մաթևոսյանի խոսքերով՝ նախատեսվում է *«Հայագիտություն»* անվանակարգը հայտարարել միջազգային, որին կկարողանան մասնակցել և՛ տեղական, և՛ արտասահմանում գործող հայագիտական կենտրոնները, ինչը կնպաստի հայագիտության զարգացմանն ու քարոզչությանը:

Մրցանակակիրները կպարգևատրվեն դրամական պարգևներով, կարժանանան ՀՀ ԳԱԱ, ՀՀԿ և ՌՀՄ պատվավոր դիպլոմի: Յուրաքանչյուր ոլորտից կլինի մեկական հաղթող:

Արմենպրես

ԼՐԱՀՈՍ

Ստորջրյա թանգարան՝ Ալեքսանդրյան ծովածոցում

ՅՈՒՆԵՍԿՈ-ն հավանության է արժանացրել Ալեքսանդրյան ծովածոցում յուրօրինակ ստորջրյա թանգարան կառուցելու վերաբերյալ եգիպտոսի առաջարկած նախագիծը:

Ըստ գիտնականների ենթադրությունների՝ Ալեքսանդրյան ծովածոցում են գտնվում այնպիսի կարևորագույն ճարտարապետական հուշարձաններ, ինչպիսիք են *Կլեոպատրայի պալատը* և աշխարհի յոթ հրաշալիքներից *Ալեքսանդրիայի փարոսը:*

Հանձնաժողովի աշխատանքների առաջին փուլի մեկնարկը որոշված է 2008 թ. նոյեմբերին: Սա կդառնա ստորջրյա մշակութային հուշարձաններին նվիրված ցուցադրությունների զարգացման նոր փուլ:

Ըստ նախագծի՝ աշխարհում աննախադեպ թանգարանը կազմված է լինելու ստորջրյա և վերջրյա հատվածներից: Ստորջրյա շինություններում այցելուները կարող են տեսնել ծովի հատակում գտնվող ճարտարապետական հուշարձաններ: Ալեքսանդրյան ծովածոցից հանված արվեստի այլ գործեր ցուցադրվելու են թանգարանի վերջրյա մասում:

ՅՈՒՆԵՍԿՈ-ի գլխավոր տնօրեն Կոիտիրո Մացուրան ողջունել է թանգարանի կառուցման նախագիծը՝ ասելով. *«Կասկած չկա, որ թանգարանի շնորհիվ նշանակալիորեն կաճի հասարակական հետաքրքրությունը ստորջրյա մշակութային ժառանգության նկատմամբ: Հարկ է հիշել, որ Ստորջրյա մշակութային ժառանգության պահպանման ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաձայնագրից բացի, որը դեռևս ուժի մեջ չի մտել, ցայժմ գոյություն չունեն ստորջրյա ժառանգությունը «գանձերի որսորդներից» պահպանող միջազգային փաստաթղթեր»:* Նա հույս է հայտնել, որ համաձայնագիրն առաջիկայում ուժի մեջ կմտնի: Այն առայժմ վավերացրել են 18 երկրներ. համաձայնագրի գործարկման համար անհրաժեշտ է 20 վավերացում:

Նյու Յորք. ՄԱԿ-ի գրքի օրեր

Նյու Յորքում ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության կողմից 2008 թ. հոկտեմբերի 9-ին և 10-ին առաջին անգամ կազմակերպվելու են *«ՄԱԿ-ի գրքի օրեր»*:

Միջոցառմանը մասնակցելու են ակադեմիկոսներ, ուսուցիչներ, գրադարանավարներ, ուսանողներ և այլք: Այն նպատակ ունի ներկայացնել ՄԱԿ-ի համակարգի և միջկառավարական կազմակերպությունների մատուցած ծառայությունները:

Բացի հրատարակությունների և այլ նյութերի ավանդական ցուցադրությունից՝ կկազմակերպվեն նաև շնորհանդեսներ՝ հնարավորություն տալով այցելուներին ուղղակիորեն հաղորդակցվել կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ տեղեկանալով նրանց արտադրանքի, ծառայությունների և առցանց էլեկտրոնային ռեսուրսների մասին:

Միջոցառման շրջանակներում այցելուները կարող են ականատես լինել Գլխավոր վեհաժողովի և ՄԱԿ-ի այլ մարմինների աշխատանքին՝ պատմական այն ժամանակահատվածում, երբ ամբողջ աշխարհը տոնելու է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների 60-ամյակը:

Մարդու իրավունքների 30-րդ միջազգային ուսուցողական ծրագիր 2009

Մարդու իրավունքների հերթական՝ 30-րդ միջազգային ուսուցողական երեքշաբաթյա ծրագիր է նախատեսված անցկացնել 2009 թ. հունիսի 14-ից հուլիսի 3-ը՝ Կանադայի Մոնրեալ քաղաքում, որին կարող են մասնակցել աշխարհի շուրջ 60 երկրներից 120 մարդ: Ծրագիրը նախատեսված է մարդու իրավունքների ոլորտի աշխատակիցների, ոչ կառավարական կազմակերպությունների ուսուցանողների, մարդու իրավունքների ազգային հաստատությունների, կառավարական մարմինների և կրթական հաստատությունների համար, որի նպատակն է ամրապնդել վերոնշյալ կազմակերպությունների աշխատակիցների ունակությունները մարդու իրավունքների համընդհանուր մշակույթ ստեղծելու գործում: Ծրագիրը կազմված է փոխուսուցման սկզբունքների հիման վրա:

Նախապատվությունը տրվելու է այն կազմակերպություններին ու անհատներին, որոնք կարող են լավագույնս ներկայացնել մարդու իրավունքների կրթության ու աջակցության արդյունավետությունը: Մասնակիցները կհրավիրվեն աշխարհագրական տարբեր վայրերից, հավասարապես՝ և՛ տղամարդիկ, և՛ կանայք:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2008 թ. նոյեմբերի 21-ը: Կարող եք նամակագրել ծրագրի թիմին՝ **ihrtp-pifdh@equitas.org** հասցեով:

Մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ հետևյալ կայքէջից՝
http://www.equitas.org/english/programs/IHRTP.php:

Միջազգային մրցույթ՝ ի պատիվ Չինգիզ Այթմատովի

Երիտասարդ առաջնորդների դպրոցը Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ իրականացնում է ղրղզ անվանի գրող Չինգիզ Այթմատովի ծննդյան 80-ամյակին նվիրված միջազգային մրցույթի հանրապետական փուլը: Մրցույթին մասնակցել կարող են բացառապես 14-25 տարեկան երիտասարդները: Մասնակցության համար պետք է աշխատանք ներկայացնել հետևյալ 4 անվանակարգերից որևէ մեկում՝ գրական ժանր, երաժշտական ստեղծագործություն, կերպարվեստ, կինո և հեռուստատեսություն:

Աշխատանքների ընդունման վերջնաժամկետը սեպտեմբերի 20-ն է: Մրցույթի ամփոփիչ փուլը կանցկացվի Բիշքեկում:

Աղբյուրը՝ Tert.am

Թերթը հրատարակվում է Հոլանդական միջեկեղեցական համագործակցության կազմակերպության (ICCO) ֆինանսական օժանդակությամբ: Երկշաբաթաթերթի բովանդակության համար պատասխանատվություն է կրում միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը:

Հրատարակության Դ տարի
Հիմնադիր և հրատարակիչ՝ Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն
ՀՀ, 2003, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2
Հեռ.՝ +374 (322) 2-29-67
Հեռապատճեն՝ +374 (322) 4-47-81
Էլ. փոստ՝ acrpc@acrpc.am; lc@acrpc.am
Կայքէջ՝ www.acrpc.am

Գլխավոր խմբագիր՝ Գևորգ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Խմբագիր՝ Հերմինե ԲԱԲՈՒՌՅԱՆ
Համակարգչային ձևավորումը՝ Արմեն ՕՍԻՊՈՎԻ
Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում:
Մեջբերումներ անելիս կամ արտատպելիս հղումը «Իրավական մշակույթին» պարտադիր է:
Հրապարակումների բովանդակությունը կարող է չհամապատասխանել խմբագրության կարծիքին:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության 2008 թ. 09.14:
Տպաքանակը՝ 2000:
Տպագրվել է «ՍԻՄ տպագրատուն» ՍՊԸ-ում:

Իրավական մշակույթ
Legal Culture
Правовая культура
ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ